

ինչուան բոլոր երկայնքը երկու կարմիր գիծ ունի : Չմեռը անդադար իր բոյնը կը փոխէ :

Տեղէ տեղ երթալու ատեն՝ լճերէ գետերէ կ'անցնին . բայց քամին սաստիկ հանդիպի նէ , երբեմն իրեք չորս հարիւրը մէկէն կը խղզուին :

Եսոնք շատ փնաս կուտան հիւսիսային Լճերիկային մէջ . և որովհետեւ հարիւրաւորը մէկտեղ կը պտըտին , մէկ գիշերուան մէջ ամբողջ արտ մը կրնան ուտել լմնցընել :

Տեսակ մը սկիւռ ալ կայ որ (Թուչոզ կ'ըսուի , վասն զի մարմնոյն չորս դին բրդոտ մաշկ մը ունի , անով ծառէ ծառ ինչուան քսան՝ երեսուն կանգուն տեղ կը ցատքէ : Եսոր գլուխը պզտի ու կտոր է , վերի պուկունքը երկու ճղքած , աչուրները դուրս ընկած ու սև , ախանջները մանր ու լերկ , վզին վերի կողմը մուլթ մոխրագոյն , իսկ փորը ճերմակ դեղնախառն : Հեռու տեղ ցատքելու ատենը ետեի ոտուրները կ'երկընցընէ՝ քովընտի մաշկերն ալ կը բանայ ու աւելի թեթև կը ցատքէ . բայց անով ալ չկրնար ցած ծառէն դէպի բարձրը կամ հաւասարը ցատքել , հապա միշտ պէտք կ'ըլլայ որ դիմացի ծառին վարի ճիւղերուն վրայ իջնայ . անոր համար իրեն շատ կամքիչ հեռու ցատքելը ծառին բարձրութենէն է :

(Թուչոզ բոյնը :

(Թուչոզն ՈՅ բուններուն վրայ շատ դիտելու բաներ կան որ բան սորվիլ ուղող մարդու մը առջևը փուճ բաներ չեն կրնար երևնալ : Ո՞վ չզարմանար ան պզտի ու սիրուն շէնքերուն վրայ , որ տեսակ տեսակ նիւթերով , այնչափ խելքով ու վարպետութեամբ շինած են . ան ալ չէ թէ զանազան գործիքներով , հապա միայն թուչունին կտուցովն ու ոտուրներովը : Ինծի կ'երևնայ թէ՛ շատ պէտք չէ զարմանալ թէ որ

մարդիկ իրենց արհեստովը կարենան փառաւոր շէնքեր շինել . վասն զի իրենք թէ խելք ունին և թէ աս բանիս յարմար գործիքներ . բայց թուչուն մը որ աս հարկաւոր բաները ամենեւին չունի , ու միայն իր ոտքովն ու կտուցովը կը շինէ ան կարգաւորեալ ու դիմացկուն բունները . աս բանիս վրայ որչափ ալ զարմանանք՝ քիչ է . ուստի ասոր վրայ կ'արժէ որ քիչ մը երկայն խօսինք :

Տաճկերէն «*Կափուշ*» և «*Կափէթ*» ըսուած թուչոց բունին պէս զարմանալի բան չկայ : Եսոնք ներսի դին բամբակով , բրդով ու բարակ և կակուղ նիւթերով պատած է , իսկ դրսի կողմը խիտ մամուռով հիւսած . և որպէս զի բոյնը ծածուկ տեղ մը ըլլայ , ու անցնող դարձողի աչքին չըզարնէ , կը նային որ մամուռին գոյնը ան ծառին կեղևին նման ըլլայ՝ որուն վրայ որ իրենց բոյնը դրեր են : Երբեմն բուններուն մէջ կը տեսնուին կենդանեաց մազեր ու բարակ յարդեր , որ մէկմէկու հետ վարպետութեամբ հիւսուած են . երբեմն ալ ամէն ծայրերը մէկտեղ բերած ու թելով մը իրարու հետ կապուած են . աս թելը ինքը թուչունը կը մանէ գըզած բրդով , կանեփով ու մազով , բայց աւելի մամուռի բունին թելելովը :

Ուրիշ թուչուններն ալ , ինչպէս սարեակն՝ ու յոպոպը՝ բոյներնին շինելէն վերջը ներսի կողմը շաղախով կը ծեփեն , որ նիւթերը մէկմէկու հետ միանան . և քանի որ շաղախը բոլորովին չորցած չէ՝ քիչ մը մամուռ կը դնեն վրան . որով բոյնը աւելի տաք կ'ըլլայ :

Նիծառնիկներուն բոյնը բոլորովին տարբեր է մէկալներէն . վասն զի ասոնք ամենեւին փայտ չեն գործածեր , հապա տեսակ մը կաւ ունին որ իրենք կը շաղուեն , ու անով կը շինեն իրենց բոյնը . և ուրիշ բունե-

1 Իտ . Calderugio.

2 Իտ . Fringuello.

3 Գարաթառագ :

4 Իպիպի :

րուն պէս կող, ամուր ու հաստատուն կ'ըլլայ : Եւ կաւը թրջելու համար շատ անգամ ջրի վրայէն կ'անցնին , ու իրենց կուրծքին փետուրները կը թրջեն , անանկով կաւը կը ջրոտեն . իսկ թէ որ ջուր չգտնեն , առաւօտեան ցօղը կը գործածեն . վերջը իրենց կտուցովը կը շաղուեն , ու բուններնին կը շինեն :

Մենէն զարմանալին Հնդկաստանի քանի մը թռչուններուն բոյներն են , որ վարպետութեամբ ծառի ճիւղերուն վրայէն վար կը կախեն , որպէս զի իրենց թռչնամի կենդանիներուն ու միջատներուն ձեռքէն ազատ ըլլան :

Ինդահանրապէս ամէն տեսակ թռչուն մէյմէկ կերպով կը շինէ իրեն բոյնը : Սմանք իրենց բոյնը տներուն վրայ կը դնեն , ոմանք ծառերու վրայ , ոմանք խոտերու տակ կը բնակին , կան ալ որ գետնի վրայ . բայց ամէն ալ կը նային որ ապահով , ու ձագերը մեծցընելու և իրենց ցեղին բազմանալուն յարմար ըլլայ :

Եւ յայտնի ահա շատ զարմանալի բան է թռչնոց բնական ճարտարութիւնը որ իրենց բոյնը շինելու ատեն կը բանեցընեն : Եւ բաներէս յայտնի կ'իմացուի թէ թռչունները պարզ մեքենայներ չեն կրնար ըսուիլ . վասն զի ճարտարութիւն , խելք , գործունէութիւն ու երկայնմտութիւն չմնար որ չբանեցընեն իրենց բոյնը շինելու համար : Եւկէ յայտնի է որ ինչ որ կ'ընեն՝ միշտ վախճան մը կը դիտեն . իրենց բոյնը գոգաւոր կէս գունտի ձևով շինած է , որպէս զի տաքութիւնը անոր մէջ ժողվուի . բունին դրսի դին կարծր նիւթերով պատած է որ հիման տեղ կը բռնէ , և քամիներէն ու միջատներէն կը պաշտպանէ . իսկ ներսը աւելի կակուղ նիւթերով պատած է , ինչպէս բրդով , փետուրով և ուրիշ այսպիսի բաներով , որպէս զի նոր ծնած ձագերը փափուկ ու տաք անկողին մը ունենան :

Եւսով ալ յայտնի է թէ թռչունները միտք ունին , որովհետեւ կը նային որ

բուններնին այսպիսի տեղ մը դնեն որ անձրեւէ ու յափշտակիչ թռչուններէ պահպանուին : Ո՞վ ըսեր է թռչունին թէ հաւկիթ պիտի ունենայ , ան բոյնն ալ շատ մեծ պիտի չըլլայ՝ որպէս զի տաքութիւնը չցրուի . խիստ պզտիկ ալ պիտի չըլլայ՝ որպէս զի ձագերը մէջը սղմին . ինչպէս ճիշդ համեմատութեամբ կը շինէ բոյնը իր ձագերուն համար որ պիտի ծնանին : Ո՞վ սորվեցուցեր է իրեն որ ժամանակը հասածին պէս չտարակուսի իր ընելիքին վրայ , և ինչուան որ բոյնը չշինէ՝ հաւկիթ չածէ : Ինչուան հիմա որչափ բան որ ըսինք այսպիսի խնդիրները լուծելու համար , ամենեւին մարդուս միտքը անոնցմով չհամադուիր , ու բռնութեան գաղտնիքը չենք կրնար մեկնել . լաւ մը հասկընալու համար պէտք էր որ կենդանեաց հոգւոյն վրայ աւելի տեղեկութիւն ունենայինք :

Եւ յայտնի է թէ թռչնոց որ և իցէ յատկութիւնն ալ իրենցմէ չէ , հապառուիչ գերագոյն կարողութիւն մը կայ որ աս բաներս իրենց ընել կուտայ : Եւ որովհետեւ կենդանիք չեն կրնար ճանչնալ իրենց արարիչը , մենք որ բանական ստեղծուած ենք՝ Եւսուծոյ մեզի տուած միտքը բանեցընենք զինքը ճանչնալու , ու իր սուրբ անունը օրհնելու :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱԿՈՒԹԻՒՆ

() Կառայից Բարձր շահելու համար ընկերութիւններ ու գործոցներ :

() ԲԵՆԲԸ անատեն օգտակար կ'ըլլայ՝ երբոր բարեսէր մարդիկ ջանան անիկայ պահել , և իրենց ջանքովը ան օրէնքներուն պակասութիւնները լեցընեն : Ինդահաւազն օրէնքը զօրութիւն չունենար՝ երբոր մարդիկ անփոյթ ըլլան անոր պահպանութեա-